1915-ից 1923-ը երկարող հայոց արհավիրքն իր գրակ-գեղ. արտացոլումն ունեցավ հայ սփյուռքում. ձևավորվեց մի նոր՝ ցեղասպանության գրակ-ը, որն արծարծում է վերապրող սերունդների ճիգը՝ ըմբռնելու, մեկնաբանելու կատարվածը, որպեսզի կյանքը շարունակվի, որպեսզի վերապրումը հնարավոր դառնա: Ցեղասպանության գրակ-ն ընդգրկում է ոչ միայն վերապրողի հակազդեցությունը, այլև հակազդեցությունը աղետի հետևանքով որբացած սերնդի, որն իր գրակ. գործունեությունը սկսել է սփյուռքում աղետից հետո, ապա ավելի ուշ, սփյուռքում ծիլ արձակող մտավորականության այն հատվածի, որ, աղետի դառն ու ցավոտ հետևանքները ժառանգած փորձում է մեկնաբանել իրավիճակը:

Ցեղասպանության գրակ-ն իր սկզբնավորման շրջանում, այսինքն՝ 1915-ին հաջորդող առաջին տասնամյակի ընթացքում, պատմում էր աղետը: Ոճը մեծ մասամբ զգացական էր, անհուն թախիծով և սուգի ու տառապանքի հառաչանքներով: Հեղինակները ականատեսի ցավագին հուշերի ճընշման տակ կքած կամ վերապրողի նկարագրած սարսափելի տեսարանների ծանր ազդեցության ներքո, փորձում էին ներկայացնել հայոց եղեռնը:

Միքայել Շ ա մ տ ա ն ճ յ ա ն ի «Հայ մտքին հարկը եղեռնին», Մ. Ս ա լ բ ի ի «Մեր խաչը», Գ. Պ ա լ ա ք յ ա ն ի «Հայ Գողգոթան», Գ ա ր տ ա ն ի «Ցավակը», Կ. Գ ա բ ր ի ե լ յ ա ն ի «Եղեռնապատում», Ա ր ս ե ն Ե ր կ ա թ ի «Անապատին հուշարձանը», Բ. Պ ո զ ա ճ յ ա ն ի «Չանղըրիի բանտեն» և այլ գործեր պարզ ու անպաճույճ վկայություններ են, երբեմն զուրկ գեղ. գունավորումից, բայց միշտ անկեղծ, խոր ցավի ու մտային անբացատրելի շփոթի արգասիք:

Ավելի բարդ իմաստային ցանց ունեն աղետի գեղ. այն դրսևորումները, ուր հեղինակները աղետը վկայագրելուց բացի, փորձում են մեկնաբանել այն: 1915-ին Կահիրեում լույս տեսավ Սուրեն Պ ա ր թ ե վ յ ա ն ի «Արյունի մատյանը», ուր հեղինակը մեկտեղել է նախաեղեռնյան հալածանքների ու արյունոտ դեպքերի իր ականավորությունները: Հայոց ցեղասպանությունը, կանխամտածված ծրագրով ու հետևողական գործադրությամբ, ինքնապաշտպանության և զինված դիմադրության հազվագյուտ կարելիություններ ընձեռեց: Ս. Պարթևյանի «Արյունի մատյանը» նպատակադրում է պանծացնել զինյալ պայքարը և փառաբանել վրեժխնդրության գաղափարը: Սասունցի Սարոն՝ «Պատնեշի վրա», Դալի Բաբան՝ «Զինակիցները», Տիգրանը՝ «Կուզը», Հարոն՝ «Անոնց մահերը» պատկերներում մի-մի դյուցազն են՝ վրեժխնդրության գերմարդկային մղումով զինված: Եվ Պարթևյանի համար

այդ իդեալականացած հերոսներն են իրական կերպարները հայի, որ թշնամու դեմ պիտի ծառանան, ինչպես ծառացել են Հայկը, Արան, Մեծն Տիգրանը...

Պարթևյանի «Անմահ բոցը» և «Զանգը հնչեց» (երկուսն էլ՝ 1917) վիպակները, 1915-ի եղեռնի սարսափներից ներշնչված, դարձյալ զինված պայքարն են ջատագովում՝ համոզելով ողորմություն չսպասել թուրքից, ինքնապաշտպանության դիմել ու կռվել: «Անմահ բոցի» հերոս Արսենը միակ ելքը համարում է ըմբոստացումը, ապստամբությունը: «Վրեժխնդիր կատաղի ահաբեկչությունը... Աչքի տեղ աչք, ակռայի տեղ ակռա... Պատվավոր դիմագրավումը մահվան... Ահա...»: Արսենը քննադատում է Ատոմին, որ դեռևս հավատում է երիտթուրքերի բարի կամեցողությանն ու հայ և թուրք ժողովուրդների խաղաղ համակեցությանը: Թուրքին հավատք ընծայող, իդեալական ապագայի տեսիլքով տարված Ատոմի տիպարը պայմանավորում է մի նոր թեմա ցեղասպանության գրակ-յան մեջ:

Պարթևյանի Ատոմը և նրա նման շատ հայեր, մինչև անգամ մտավորականներ, սպառնացող վտանգի ոլորտում, չէին կարողանում կամ չէին ուզում տեսնել իրականությունը՝ նպատակադրված ցեղասպանության ծրագիրը: Պատճառը բխում է բնազդային դիմադրությունից ու ինքնապաշտպանությունից՝ չհավատալ իրականությանը, քանի որ այն դուրս է մարդկային երևակայության թույլ տված սարսափի ու տառապանքի սահմաններից:

Ինքնաքննադատության ցայտուն օրինակ է Արամ *Անտոնյանի* «Այն սև օրերուն» (1910) գործը, ուր իրապաշտական պատկերներով բացահայտվում են մարդկային բնազդները, որոնք շղթայազերծվում են, երբ մարդ էակը զարհուրելի փորձության է ենթարկվում:

Ցեղասպանության գրակ-յան առաջին շրջանում քիչ են թուրքի տիպարը պարզող, նրան իբրև ոճրի իրական հեղինակը ներկայացնող օրինակները: Այդ փոքրաթիվ նմուշներից է Պարթևյանի «Անմահ բոցը»:

1920-ին գրված Հակոբ Օշական ի (1883–1948) «Կայսերական հաղթերգություն» պատկերների հավաքածուն բնորոշ տեղ է գրավում ցեղասպանության գրակ-յան սկզբնավորման շրջանում թուրքի կերպարը խորացնելու փորձի մեջ և յուրօրինակ դիտակետի ընտրությամբ: Այստեղ հայոց եղեռնը պատմողը հեղինակը չէ. «Արծիվները» նկարագրված է երկնքում սավառնող և արյունի հոտից դեպի դաշտերը սլացող արծիվների աչքերով: «Վրդովված խղճմտանքը» մի ողջ գյուղի բնաջնջումն է՝ պատմողը կոտորածի վկա աղբյուրն է: «Տանտանը» ջարդից

Հ. Օշական

ազատված 5-6 տարեկան երեխայի անկապակից ու տեղաշարժված, բայց խորիմաստ տպավորություններն են: Օշականը դիտավորյալ փորձում է հեռվից դատել, հայոց եղեռնը դիտել այն գործադրողների և դրան մասնակցող թուրք ամբոխի տեսանկյունից («Վրդովված խղճմտանք» և «Վրեժը»): Թուրքի էության, հոգեբանության, բնազդային մղումների պեղումի մեջ գրողն ավելի ու ավելի է խորացել իր հետագա՝ «Ծակ պտուկը», «Հաճի Ապտուլլահի», «Հարյուր մեկ տարվան», «Մնացորդաց» գործերում:

Օշականը փորձել է բացատրել թե ինչո՞ւ «...թուրքերը, եպարքոսէն մինչև գեղջուկ հովիւը, խորագույն հանդարտութեամբ ընդունեցին բնաջնջման պատգամը: Ատիկա հին դարերու բնազդներու հրաւեր մըն էր, իրենց համար շատ հաճելի» («Համապատկեր արևմտահայ գրականութեան», հ. 9): Ցեղասպանության գրակ-յան լավագույն նմուշներից է նաև «Մնացորդաց» եռահատոր վեպը, որի մեջ վիտում են տարբեր դասակարգերի, կրթության ու զարգացման զանազան մակարդակներով թուրք կերպարներ: Եվ եզրակացությունը՝ «Ոչ միայն ոճրագործ մարդեր ունին գոյութիւն: Ունին գոյութիւն ոճրագործ ցեղեր: Ու թուրքերը չեն մերժեր այդ պատիւը» (նույն տեղում):

Նախաեղեռնյան շրջանում մեծ ճանաչում գտած բանաստեղծ Վահան *Թեքեյանը* (1887–1945) այն փոքրաթիվ բախտավորներից էր, որ հեռու մնաց աղետից: Անմիջապես հետեղեռնյան նրա բանաստեղծությունների մեջ անհուն ցավ կա, անզոր հառաչանք: «Ահավոր բան մը այնտեղ» բանաստեղծությունը (1916) արտահայտում է հեղինակի տառապանքը, երբ «Ազգ մը ամբողջ» կործանվում է, սպանվում: Իրականությունը դուրս է մարդկային երևակայությունից: անկարելի է բացատրել «Դժոխային այս տռամն ինչպես կրնայ պատմուիլ...»:

Աստծո դեմ մեղադրանքները կրկնվում են ինչպես այս, այնպես էլ «Պիտի ըսենք Աստուծոյ» (1917) բանաստեղծության մեջ: Թուրք անունը որպես դահիճ ու թշնամի՝ բացահայտ մատնանշելը հազվադեպ երևույթ է Թեքեյանի մոտ: Այդ օրինակներից է «Պիտի իյնաս»-ը (1914), որ թուրքի դեմ համակ ցասում է ու անեծք: «Մութ ժամեր» (1922) շարքում արտահայտում է հայ ժողովրդի ներքին դրաման. արտաքին դրդապատճառները կարևոր չեն. բանաստեղծը չի հիշում թե ինչո՞ւ, ի՞նչն էր կամ ո՞վ էր պատճառը հայրենիքի կորստի: Միայն սգում է կորուստը նրա: «Պիտի մոռնանք» բանաստեղծության (1918) մեջ պայման է դնում Աստծո հետ.

Պիտի մոռնանք մենք, զմեզ, մեր վիշտն ու վէրքն առաջին,

Պիտի մոռնանք այնպես չէ՞, երբ մեր երկիրը դառնանք...

Թեքեյանը ապրում է շփոթը հետեղեռնյան սփյուռքի, սգում է կորուստը հայրենիքի (Արմ. Հայաստան) և չի տեսնում ոչ մի հույս ապագայի: «Սփյուռք» բանաստեղծությունը (1923) ամենախոսուն պատկերն է այդ անհուսալի իրավիճակի: Եվ այս տխուր պատկերի առջև շվարած-կանգնած գրողի համար լուծումի ուղին դարձյալ դեպի Աստվածն է գծուծ՝ «Աստուած, ես ի՞նչ աղօթք կրնամ ուղղել քեզ»: Տարիներ պետք է անցնեին, մինչև ցաք ու ցրիվ գաղթականությունը կազմակերպված գաղութներ դառնար: Թեքեյանը զգաց վերածնունդը, ականատես եղավ աղետի ճնշող ու թունավորող ազդեցությունից ձերբազատվելու փոր-

ծերին: «Փոշի ազգ» քերթվածքում (1939) բանաստեղծը պատգամում է հարատև ու հաստատակամ լինել, որ փոշիացած ազգը դարձյալ ուժ դառնա:

Զապել Եսայան (1878–1943) «Ավերակներու մեջ» ստեղծագործության մեջ կատարելությամբ են ներկայացված 1909-ի Կիլիկիայի ջարդերը: Հեղինակը պեղել, վեր է հանել հայի հոգին՝ իր վախի ու ընկրկումների, իր ընդվզումի ու ծառացումի մեջ: Նա կարողացել է թափանցել թուրքի ներաշխարհը, ներկայացնել կառավարական պաշտոնյային, հոգևորականին, հայի դրկից հարևանին՝ իր ցեղային բնազդներով, մղումներով, նախանձով, կրքերով ու կրոնական մոլեռանդությամբ: 1915-ի եղեռնի սպանդից մազապուրծ՝ Եսայանը չփորձեց արձագանքել աղետին: Սակայն Եսայանի հետագա ստեղծագործությունները զերծ չմնացին աղետի ներգործումից: 1919-ին գրված (հրտ. 1922, Վիեննա) «Հոգիս աքսորյալ» վիպակը արտացոլում է արվեստագետի հոգու տվայտանքը, ամլության մատնված նրա ստեղծագործ միտքը հետեղեռնյան մթնոլորտում: «Սոսկալի ուրվական գլխավորապես հարվածեց մեր մտավորականները: Ու այս կորուստը անդարմանելի է. կանցնի ժամանակը, կը փոխուին դեպքերը, կը լցուին պակասը թիվերուն և պակասը քաղաքներուն, բայց Զարդարյանի մը, Զոհրապի մը տեղը պարապ կը մնան»: (Եսայան Զ., Թրքահայ ժամանակակից գրողներ, 1916):

Հետեղեռնյան սփյուռքի մեջ գրակ. ասպարեզ մտած սերնդին հաճախ «Անապատի սերունդ» են կոչում. նրանք մեծ մասամբ կոտորածից մազապուրծ, որբանոցներում մեծացած տղաներ են:

Վազգեն Շուշանյանի (1902-1941) «Վասն պատրանաթափ մանկության և մնայուն աղքատության» անտիպ գործը պատկերում է սփյուռքահայ նոր սերնդի մանկության թշվառ օրերը: Նրանց մանկությունն անցել է ստրկության, անհայրենիք որբության մեջ, աքսորի ճանապարհների վրա կամ եղեռնի ալիքների գրոհի տակ աշխարհներ ընկած, մարդու հոգին կոպտացնող ամենօրյա անգութ գոյամարտի մեջ նետված՝ նրանք ծիգ էին անում դիմագրավել կյանքի բիրտ պայմաններին: Նրանց հոգու խորքում, սակայն, իր գոյությունն էր քարշ տալիս լավը, բարին՝ հայրենական տան տաքուկ հարկի, մոր անուշ գրկի և մանկական անհոգ կյանքի հիշատակների հետ խառնված: Եվ հոգու տևական պայքարը ստեղծում էր կործանիչ մի երկվություն. «Ինչո՞ւ մեր մեջ երկու էակ կը բնակի. մէկը փողոցայինը՝ լիրբ, հասարակ, վայրենի, միւսը՝ որ կը դողդոջէ առաջին իսկ սիրոյ խռովքէն: Յաճախ մեկը միւսին կը խանգարէ, կից կուտայ կը հայհոյէ, հետաքրքիր է այդ սրիկային ու այդ քնքուշ տղուն կռիւը...» (Շուշանյան Վ., Սիրոյ և արկածի տղաքը, 1957):

1920–30-ական թթ. եղեռնը վերապրող մի նոր սերունդ էր հասակ առնում սփյուռքում՝ տարածված Միջին Արևի երկրներից մինչև Ֆրանսիա ու Ամերիկա: Արտաքին աշխարհի խիստ ու անհյուրընկալ իրականության մեջ միակ սփոփանքը երազին ապաստանելն էր, ներաշխարհում փակվելը և անցյալը վերհիշելը: Այս սերնդի ստեղծած գրակ-ը հենց այդ երազն է՝ մերթ հայրենի գյուղի նկարագրությամբ, մերթ կարոտի ու հայրենադարձության ցավագին հառաչանքներով դրսևորված: Բազմաթիվ են անունները, բայց փոքրաթիվ են հարատևողները: *Համաստեղը*, Մուշեղ Իշխանը, Զարեհ Որբունին, Նիկողայոս Սարաֆյանը, Շավարշ Նարդունին, Շահան Շահնուրը հասել են մեզ իրենց անկեղծ, անբռնազբոս արվեստով, բաբախուն հոգու հառաչանքներով, երազներով, ընդվզումով, սիրո ու հուսահատության արտահայտություններով: Նրանց ստեղծած գրակ-ը, եթե արտաքնապես ուղղակի առնչություն չունի աղետի հետ, եթե չի աղետի ազդեցությունը, արտացոլում որբացած սերնդի գոյապայքարը սփյուռքի մեջ:

Լ. Զ. Սյուրմելյան

1924-ին Փարիզում հրատարակվեց Լևոն Զավեն Սյուրմելյանի (1907–1995) «Լույս զվարթ» բանաստեղծությունների ժող. կորցրած հայրենիքի, եղեռնին զոհ գնացած ծնողների, մանկության հիշատակների ծանր ապրումներով: Հետագայում Սյուրմելյանը գրել է անգլերենով:

Մուշեղ Իշխանը (1912–90) դեռ 1946-ին, «Հայաստան» բանաստեղծությունների շարքում գեղ. պատկերներով Հայաստանի ու հայ ժողովրդի պատմությունը հիշելով, կոչ է անում հարության, իսկ 1974-ին, մի հետադարձ հայացք ձգելով իր մանկությանը, աքսորի ճամփաները նորից կտրելով ու հին տառապանքները վերապրելով, փակում է կյանքի տխուր էջերը՝ «Մնաս բարով մանկություն» ինքնակենսագրականով:

Անդրանիկ *Ծառուկյանը* (1912–89), Մեծ եղեռնից ազատված, որբանոցում մեծացած, հեղինակն է «Մանկություն չունեցող մարդիկ» վեպ-ինքնակենսագրության: «Հող և արյուն» բանաստեղծության մեջ նա եղեռնին զոհ դարձած հայերին երանի է տալիս: Գրողի համար ներկան սև է և տխուր, միակ ապավենը հիշատակներն են անցյալի: Հոռետեսությունը ներկայի ու ապագայի նկատմամբ մի նոր թեմա է հետեղեռնյան գրակ-յան մեջ՝ իբրև աղետի հստակ արձագանք: Այս առումով կոթողային է Շահան Շահնուրի (1903–74) «Նահանջ առանց երգի» վեպը: «Նահանջը, նահանջը հայերուն կռիվը սրբազան բան է, ճակատամարտը երբեմն նույնիսկ օգտակար, անոնցմէ ազգ մը դուրս կուգայ պարտուած կամ յաղթական, սակայն երկրպարագային ալ դուրս կուգայ. բայց նահանջը հոգիներու գլխի պտույտ տուող աս զառիթափին վրայ սա նահանջը կը ջնջէ, կը ծուլէ, կ'անհետացնէ ամեն բան» («Նահանջ առանց երգի», 1959, էջ 172): «Նահանջ առանց երգի» վեպն է սփյուռքի, որի հորիզոններում տվայտում է մի ողջ սերունդ, պայքարում համակերպվելու համար, փորձում իր ինքնուրույն երկվության թնջուկը լուծել: Այդ պայքարի մեջ կա

տանուլ է տալիս՝ հոգեպես ջախջախվում, կամ շարունակում է անհույս կռիվը և հուսահատ պայքարի մեջ փորձում գտնել սկզբնաղբյուրը իր տառապանքի՝ հասկանալ Աղետը: Եվ առկա է ընդվզումն ընդդեմ ավանդական արժեքների, բոլոր մեծությունների, անմիջական նախորդների, քանի որ չեն կարողացել իրենց փոխանցել միջոցը՝ զենքը տոկալու, Աղետը վերապրելու: Այս նույն ընդվզումի հետևանք է «Մենք» խմբակցության կազմավորումը՝ իր հավատո հանգանակով, իր նպատակներով (1920–30-ական թթ. Փարիզում մի խումբ երիտասարդ գրողներ, մեծ մասամբ եղեռնից փրկված որբեր, որոնք համախմբվել էին հայ գրակ. ուղղությունը փոխելու, դրան թարմ շունչ ներարկելու հավակնությամբ, հրատարակեցին «Մենք» պարբերականը, որ լույս տեսավ 5 համար միայն, 1931–34-ին): Նույն խմբակցության անդամ Շավարշ Նարդունիի խոսքերով՝ «Մենքը» կոչված էր փնտրելու «երիտասարդը, որ թօթափած է հին աւանդութեանց փոշին: Մենք երիտասարդներ կը փընտռենք նոր հոգիով, պատերազմէն քանդուած և զինադադարէն յետոյ վերաշինուած քաղաքներու պէս նոր և արդիական...» («Մենք», N 1, 1931, էջ 39):

Սփյուռքի մղձավանջը արտացոլող թեմաները կրկնվում են նաև Զարեհ Որբունու՝ «Փորձը» (1929), «Եվ եղև մարդ», «Սովորական օր մը», Հրաչ Զարդարյանի «Մեր կյանքը» (1934) և այլ գործերում: Հայոց եղեռնի ալեկոծող ցավը փոխանցվում է հաջորդ սերնդին, հայրենի հողը չտեսած Հակոբ Կարապետը իր աչքերի մեջ «կրում է իր տարագիր ժողովրդի ցավը, կարոտը», Ժերար Շալյանը Փարիզում իր պատմագիտական ուսումնասիրություններում «հիշատակների հիշատակից» հալածված «մանկության սևազգեստ պառավի հուշերի» ահավոր պատկերն է տեսնում: Այսօրվա սփյուռքում ստեղծված գրակ-յան, նոր սերնդի գրակ. փորձերի մեջ շեշտվում է ցասումի և ընդվզումի զգացումը՝ ոչ թե Աստծու կամ ճակատագրի դեմ, այլ ոճիրը նյութած և այդ ոճիրը այսօր ուրացող քաղաքակրթության դեմ:

Ռ. Փիրումյան (ԱՄՆ)